

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.782 սպառագիլ


ԽԵԶԳԵՍ ՊԵՏՔԵ

ԱՐԴԻՒՆ


ԿՈՐՐԱՐԱՄԻԿԻ

334

h - 61



334 - h - 61



ՊԵՏՔԵՐԱՎԱՐԱՐ

334

h - 61

10 JAN 2015

25-702

334. ս6
h - 61
300
1712-40

15 JAN 2010

Գրք ետարներ բոլոր լեռների, միացել:

L. S. U.



ԿԱՂՊԵՍ ԹԻՏԻ ԼԻՒ
ԿՈՂՊԵՐԱՇԻՎԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ

1003
1925


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ՑԵՐԵՎԱՆԻ ՔԱՂ. ԳԱՎԳԱՄՆԱԽՄԻ

1925 թ.

ԵԵՐԵՎԱՆ

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ԳՐԱԽԱՎԱՐ. № 1751 Պ. № 1957 Տիր. 5000



005
01-2171

1.2.5

ԻՆՉՊԵՄ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾԱԿԱՏՈՐԸ

1

Ինչպես գիտեք՝ կոռպերացիան բազմաթիվ ժամանակակից լուսակցություն և կ լուսական լուսակություն առաջանական դրանք կազմում են տեսակ-տեսակ. դրանցից մեկը սպառողական խանութն է, վորին սովորաբար ասում են կոռպերատիվ:

Սպառողական խանութը կամ կոռպերատիվը իր արտաքին տեսքով նույնն է, ինչ վոր ժամանակոր խանութը քաղաքներում կամ կենտրոնական գյուղերում. յերկուսի մեջ ել կան դարակներ, վորոնց վրա դարսված են ապրանքներ, այդ խանութներում դրված ե յերկարուկ սեղան, վորի վրա գտնվում են կշեռք, կշռաքարեր, առշին, համբիչ, և այլն. սեղանի հետեւմ կանգնած են մեկ կամ մի քանի գործակատարներ, վորոնք լուսակություն ունենալու համար ապրանքներ:

Բայց սպառողական խանութը տարբերվում է մասնավոր խանութից իր ներքին կանքով:

Որինակ՝ մասնավոր խանութը պատկանում է մեկ մարզու և խանութի միջի ապրանքները սեփականություն են մեկի:

Իսկ սպառողական խանութը պատկանում է շատ մարդկանց և խանութի միջի ապրանքները սեփականություն են շատերի:

Մասնավոր խանութը աշխատում ե եժանագին ապրանք ձեռք բերել և թանգ գնով ծախել:

Իսկ սպառողական խանութը աշխատում է լավ ապրանք ձեռք բերել ու եժան գնով ծախել:

Մասնավոր խանութը աշխատում է վորքան կարելի և շատ փող վաստակել և տիրոջ գըրպանը լեցնել:

Իսկ սպառողական խանութն ընդհակառակը՝ աշխատում է փոչ թե՛ շատ փող վաստակել, այլ իր անդամներին եժան գնով ապրանք տալ, թե՛ կուզ՝ այդ ապրանքից վաստակ ըիշ մնա:

Ինչպես տեսնում եք՝ արտաքինով նման յերկու խանութները բոլորովին տարբերվում են միմյանցից իրենց առետրի ձեռով ու նպատակներով:

2

Մասնավոր խանութը կառավարում է կառտերը կամ գործակատարը, իսկ սպառողական խանութը կառավարում է գործակատարը:

Սպառողական խանութի տերերը կոռպերատիվի անդամներն են, վորոնց թիվը համառում ե մի քանի հարյուր հոգու. սրանք ժողավ են գումարում, այդ ժողովում ընտրում են մի քանի հոգուց բազկացած վարչություն, վորին և հանձնում են ընկերության գործերի ղեկավարությունը, իսկ վարչությունը սպառողական խանութը կառավարելու համար՝ հրավիրում է գործակատար:

Գործակատար կարող ե լինել կամ վարչության անդամներից մեկն ու մեկը, կամ կողմանակի մարդ, սակայն ով ել ուզում ե լինի այդ մեկը, նա պիտի անդամագրված լինի կոռպերատիվին:

Ի՞նչ տարբերություն կա կոռպերատիվի ու մասնավոր խանութի գործակատարի մեջ. Ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունի կոռպերատիվի գործակատարը և ի՞նչպես պիտի տանի գործը—անա այն հարցը, վորի մասին պիտի գրուցենք այստեղ:

3

Մասնավոր խանութպանը խանութ բացելով, ինչպես տեսանք, մի նպատակ ունի,—վորքան կարելի յե փող շատ վաստակել և իրեն համար կարողություն դրստել, և այդ բանին հասնելու համար գործի յե գնում ամեն միջոց:

Նախ՝ նա ձեռք ե բերում եժանագին ապրանք և վաճառում ե թանկ գնով՝ նրա հոգը չի, թե ապրանքը վատ տեսակի ե ու անպետք. նա գոնե, յերբ իր գնած ու վաճառած ապրանքից մեծ վաստակ ե ստանում:

Յերկը դաշնավոր խանութպանը չի բավականանում միմիայն առուծախքի վաստակով, այլ դիմում ե նաև ծուռ միջոցների, այն ե՝ գողանում ե չափի ու կշռի մեջ. որինակ՝ շաքարը կշռելիս՝ զնում ե հաստ թղթի մեջ և ապա կրշում. չիթք չափելիս՝ այնպես ե ձգում կամ մատերը խաղացնում, վոր արշինի մեջ կես, շատ անգամ մեկ վերշոկ պակաս ե տալիս. նավթի չափը այնպես ե շինել տալիս, վոր յերբեք նրա միջի նավթը մեկ գրվանքա չի կշռում։

Յեզ այսպիսով մասնավոր խանութպանը թե ապրանքների գնի մեջ ե վաստակում և թե չափերի ու կշռի։

Բացի այդ, մասնավոր խանութպանը աշխատում ե վաստակել նաև խանութի ծախքերի մեջ, այսինքն՝ խանութի վրա քիչ ե ծախսում։ Վարձում ե եժանագին խանութ, խանութի սարքու կարգի վրա ծախսում ե շնչին զումար, ապրանքների համար մաքուր դարակներ ու պահարաններ շինել չի տալիս, ապրանքները կեզա ու թողի մեջ ե պահում։

Յեզ չնայած այս բոյորին, մասնավոր խանութպանը գործ ե գնում շողոքորթ լեզու, խարեբայություն, խորամանկ միջոցներ. նա քաղցր լեզվով դրավում ե գյուղացուն, ձևանում ե նրա բարեկամը, յերդվում ե տսածու և սրբերի անունով, ու իր հասարակ ապրանքը թանկ գնով սաղացնում ե միամիտ զյուղացու վրա։

Այս կերպ վարվում ե գյուղացու կամ գնորդի հետ նաև մասնավոր խանութպանի գործակատարը։

Նա ել աշխատում ե եժանագին ապրանք ձեռք բերել ու թանկ գնով վաճառել. չափերի ու կշռի մեջ գողանալ, խանութի կահավորության վրա քիչ ծախսել, կամ բոլորովին չը ծախսել, ապրանքները անխնամ թողնել և կեղտի ու թողի մեջ փուեցնել. Մրա հետ միասին գործ ե ածում շողոքորթ լեզու, խարեբայություն և խորամանկություն՝ ապրանքները թանկ գնով ծախելու համար։

Ինքնըստինքյան ծագում ե այսպիսի հարց։

Մասնավոր խանութպանը դիմում ե այդպիսի միջոցների իր շահի համար, — նա, ինչպես ասում են՝ իր հոգին սեացնում ե իր գրպանը լցնելու, կարողություն դրատելու համար։

Ապա ի՞նչու այդ նույն միջոցներին դիմում ե գործակատարը, յերբ համոզված ե, վոր իր

վաստակածից և գողացածից վոչ մի կոպեկ իր
գրպանը չի մանելու:

Այս շատ հասկանալի եւ

Յեթե գործակատարը ընդունակ չը լինի
ապրանքը եժան գնելու ու թանգ վաճառելու,
յեթե նա չը կարողանա չափից ու կըսից գողա-
նալ և վերջապես, յեթե նա չողոքորթելու, խա-
բելու շնորք չունենա՝ նրան վոչ մի խանութպան
չի վարձի, նա գործակատարի պաշտոն վոչ մի
դեպքում ստանալ չի կարող:

Յեզ ընդհակառակը՝ մասնավոր խանութի
գործակատարը վորքան մեծ վաստակ դուրս
քաշի գնորդից, վորքան շատ գողանա և վորքան
շողոքորթելու, համոզելու մեջ մեծ շնորք ցույց
տա, այնքան ավելի տեղ կունենա, վարձատրու-
թյուն կոտանա, առաջ կը դնա:

4

Սակայն բալովովին այլ են սպառողական
խանութի գործակատարի գերն ու պարտականու-
թյունը:

Նախ՝ պիտի տահնք, վոր կոռպերատիվի
գործակատարը արտաքին նշաններով նույնն ե,
ինչ վոր մասնավոր խանութի գործակատարը:

Որինակ՝ ինչպես մասնավոր խանութում,
այնպես ել կոռպերատիվում, գործակատարը վար-
չության հետ կտպում ե պայման, վորով վար-

չությունը պարտավորվում ե վճարել գործա-
կատարին վորոշ վարձատրություն, ինկ գործա-
կատարը պարտավորվում ե կատարել վորոշ աշ-
խատանք: Ի հարկե՛ յերկու կողմերն ել ճշտու-
թյամբ կատարում են իրենց վրա դրված պար-
տականությունները:

Կոռպերատիվում, ինչպես և մասնավոր
խանութում, գործակատարը չափում ու կշռում
է ապրանքներ, դարսում, կապում և այն, հանձ-
նում ե դնորդին ու ճանապարհ ձգում և այլն:

Սակայն իր ներքին իմաստով՝ կոռպերա-
տիվում աշխատող գործակատարը մասնավոր խա-
նութի գործակատարից բոլորովին տարբեր եւ:

Այսուղի, կոռպերատիվում, կան հատուկ դրու-
թյուններ, վորոնք գործակատարի վրա դնում
են վորոշ պարտականություններ և վերապահում
են նրան վորոշ իրավունքներ:

Ի՞նչում են կայանում այդ իրավունքներն
ու պարտականությունները:

Նախ և առաջ՝ կոռպերատիվի գործակատարը
նույն ընկերության անդամն ե, վորին ծառայում
ե. Նա ոգտվում ե այն բոլոր իրավունքներից,
ինչ վոր կոռպերատիվի յուրաքանչյուր անդամը:
Նա մասնակցում ե ընդհանուր ժողովներին, այ-
սինքն մասնակցում ե բոլոր վորոշումներին և
կրում ե պատասխանատվության իր բաժինը:

Նա մասնակցում եւ վարչության ընտրությանը, — վարչություն, վորից ինքը կախում ունի — և իր գործունեության մասին նրան տալիս եւ հաշիվ ու նրա հավանությունն եւ ստանում:

Ինչպես տեսնում եք՝ գործակատարը կոռոպերատիվում և տեր եւ և բանվոր, նա և հրամայում եւ և յենթարկվում, և կառավարում եւ և ծառայում:

Մասնավոր խանութում այդպիսի գրությունը չեք գտնի: Այնտեղ խանութատերը ինքնիշխան եւ գործակատարը վոչինչ չի իմասնում տիրոջ առևտրական գործերի մասին, յերբեք տերը չի մտածում հաշիվ տալ գործակատարներին ու նրանց հավանությունն ստանալ:

Իսկ կոռպերատիվն ընդհակառակ՝ գործում եւ իր անդամների հրամանով, ու ցուցմունքներով, այն անդամների, վորոնց թվում զտնվում են առ գործակատարը:

Պատկերացրեք ձեզ, վոր ձեզ քաղաքը կամ գյուղը վեր եւ ածվել մեկ մեծ կոռպերատիվի և նրանում յեղած խանութներն ու գործարանները, սայլերն ու կենդանիները, արտերն ու այգիները պատկանում են կոռպերատիվին. Ի՞նչ կը լիներ արդ գեղքում. այն, վոր բոլոր ընակիչները, առանց բացառության, կլինելին ձեր կոռպերատիվի անդամները և միաժամանակ ծառայող-

ները, կամ գործակատարները. իհարկե, այլևս չելք գտնվի ծառայող, վոր կոռպերատիվի անդամ չը լիներ և չեր գտնվի անդամ, վոր կոռպերատիվի ծառայող չլիներ:

Այդպես լինելով՝ ձեր վարձատրությունը կը նշանակեցիք դուք. դուք կը նշանակեցիք նաև ապրանքների զները. իսկ ապրանքների գները կնշանակեցիք այնպես, վոր նրանք թանկ չը լինելին և մի կնորդից ավելորդ փող գուրս չը գարու մյուսին չանցներ ինչպիս այդ լինում եւ մասնավոր խանութներում:

Կոռպերատիվում գործակատարը, հանդիսանալով իրեն գործի տեր, բնականաբար, վերաբերվում է կոռպերատիվին վորպես իր սեփական գործին և դնում է գործի մեջ ջանք ու հոգատարություն: Ճիշտ ե՝ կոռպերատիվի անդամները կամ տերերը շատ շատ են, իսկ գործակատարները քիչ, բայց դրանով գործի եյությունը չի փոխվում:

Մասնավոր խանութում գործակատարի և գոծատիրոջ հարաբերությունը ամբողջովին կայանում եւ մեկ կողմից ոռծիկ վճարելու, մյուս կողմից սոսկ աշխատանք կատարելու մեջ:

Իսկ կոռպերատիվում սրա վրա ավելանում եւ այն գիտակցությունը, վոր գործակատարը միաժամանակ գործի տերն եւ: Այս բանից ինքնըստին-

Քյան բղխում ե այս, վոր գործակատարը իր աշխատանքի մեջ զնում ե և սիրտ և յեռանդ, իսկ ամենքիդ հայտնի յն, վոր գործակատարի աշխատանքից կախված ե մեծապես կոռպերատիվի առաջադիմությունը:

Կոռպերատիվի գործակատարի մի այլ առավելությունը ցույց տալու համար՝ բերենք այստեղ մի հանգամանք ևս: Ինչպես տեսանք, մասնավոր խանութի գործակատարը ամեն կերպ աշխատում է գնորդներին շահագործել, լինի նա կողմանակի մեկը, թե նույնիսկ իր մերձափորը և շահագործում է իր տիրոջ գրպանը լցնելու համար. այս պահանջում ե նրանից գործատերը:

Կոռպերատիվի գործակատարը միանգամայն ազատ և այդ պարտականությունից: Վոչ կոռպերատիվի անդամները և վոչ ել վարչությունը չեն պահանջում գործակատարից խարել ու գողանալ, կամ շահագործել գնորդներին—մի յերեւյթ, վոր վաշ մի դեպքում տեղ չը պիտի ունենա կոռպերատիվի պատերի մեջ:

Այս և նման շատ առավելություններ կոռպերատիվի գործակատարին գարձնում են զիտակից, պարտաճանաչ, զգայուն. նա զգում ե, վոր ինքը կոչված է կատարելու հասարակական մեծ գործ, մի գործ, վոր իր մեջ կրում ե վոչ միայն վորոշ պարտականությունների կամ վորոշ վար-

ձատրության արժեք, այլ շատ ավելին—մի արժեք, վորով կոռպերատիվի շուրջը ստեղծում է հմայք, հարազատություն, փոխադարձ շահերի գիտակցություն, համագործակցություն — այսինքն՝ գեպի նոր հասարակակարգը տանող պայմաններ:

5.

Յեթե այսպես բարձր է կոռպերատիվի գործակատարի կոչումը կոռպերատիվ ասպարիզում, ապա նա պիտի զիտենա ու ձատությամբ կատարի մի շարք գործնական պարտականություններ, վորոնք կրելով առորյա բընույթ, հաճախ փոքրիկ ու չնչին գործեր լինելով՝ գալիս են կատարյալ դարձնելու այն աշխատանքը, վոր դրված է անմիջականորեն նրա վրա:

Այդ պարտականություններն են.

1. Կոռպերատիվի գործակատարը պիտի գիտենա առևտուր անել. այս նշանակում ե, վոր նա ծանոթ պիտի լինի կոռպերատիվի անդամների կամ սպառողների ճաշակին ու պահանջին, գնումներ կատարող վարչության անդամին ցուցմունքներ պիտի տա՝ ընտրելու այնպիսի ապրանքներ ու ապրանքների տեսակներ, վորոնք անհրաժեշտ են սպառողների խոշոր մեծամասնության համար:

2. Կոռպերատիվի գործակատարը գնումներ

կառարող վարչության անդամին պիտի խորհուրդները տա, վոր նա, ապրանք ընտրելիս, ամեն կերպ աշխատի ընտրել լավ հատկության ապրանք, այնպիսին, վորը անպայմանորեն առավելություն ունենա մասնավոր խանութում յեղած ապրանքներից:

3. Կոռպերատիվի գործակատարը գնումներ կառարող վարչության անդամից պիտի պահանջի, վոր նա աշխատի ապրանքները եժան գնել և տեղափոխության ու այլ ծախքերը խնայողությամբ կատարել:

4. Սպառողական խանութը հարկավոր ե վարձել բնակավայրի կենտրոնում և վորքան գարելի յել լավ տեղում ու լավ շենքի մեջ։ Այս նույնպես պիտի կատարվի կոռպերատիվի գործակատարի ցուցմունքներով։

5. Կովկերատիվի գործակատարը պիտի աշխատի խանութը կահավորել ճաշակով, դուրսը հարկավոր ե դեղեցկացնել, իսկ ներսը զարգարել կոռպերացիային վերաբերքով նկարներով, քարտեղներով, դիագրամներով, որացույցներով ու զանազան կոչերով։

6. Ապրանքները պետք ե դասավորել դարակիներում այնպես խնամքով, վոր նրանք միանդամայն ազատ լինելով վչացումից, միաժամանակ հաճույք պատճառեն հաճախորդին։

7. Կոռպերատիվի վարչությունը ապրանքները պիտի գնահատի գործակատարի ցուցմունքներով և պիտի գնահատի այնպես, վոր կոռպերատիվի ապրանքը չափավոր վաստակ ունենալով, անպայմանորեն եժան լինի մասնավոր խանութի ապրանքներից։

Մի խոսքով՝ կոռպերատիվի ապրանքների հատկության, գների չափավորության և խանութի կարգ ու սարգի պատասխանատվությունը ընկնում ե գործակատարի վրա և նա ջանք պիտի թափի՝ վոչ միայն գրավելու սպառողի ուշադրությունն ու հաճությունը, այլ և մահացու հարգած պիտի հասցնի մասնավոր խանութպահնին, մասնավոր առեարին և մասնավոր կապիտալին։

Կոռպերատիվի առևտուրն ու գործը գնելով այս հիմունքների վրա՝ կոռպերատիվի գործակատարը բնականաբար կարիք չի ունենալու խաբելու, վոչ խորամանկ միջոցի դիմելու և վոչ ել շողոքորթ լեզու բանեցնելու՝ սպառողին համոզելու համար, ինչպես այդ անում են մասնավոր խանութպահնը կամ նրա գործակատարը։ Կոռպերատիվը այդ բոլորի փոխարեն հրապարակ պիտի բերի կարգ, շիտակություն և շահավետություն, այսինքն մրցության լավագույն զենքը։

Սակայն այս բոլորով հանդերձ՝ կոռպերատիվի գործակատարը պիտի ունենա մի առավելություն ևս, դա քաղաքավարության և ճշշտապահության որենքն եւ:

Նախ նա պիտի լինի վերին աստիճանի քաղաքավարի գեղի սպառողը կամ հաճախորդը՝ կոպատությունը, արհամարանքը և խուսափումը յերբեք տեղ չպիտի գտնեն նրա վարփեցողության մեջ:

Նա պիտի լինի վերին աստիճանի կարգապահ ու անաշառ, — կոռպերատիվում չպիտի տեղի ունենա կողմնապահություն, խարություն, հերթի խախտումն. բոլոր հաճախորդները պիտի միաձև ընդունվեն, ու միաձև ճանապարհ ձգվեն:

Կոռպերատիվի գործակատարը պիտի լինի աշխույժ, կենսուրախ և արագաշարժ, նրա շարժումների մեջ յերբեք չպիտի նկատվի հոգնածություն. գանդաղկոտություն և մանավանդ ձարձրույթ, թուլամորթություն. Այս վերջին հատկությունների տեր գործակատարը և վոչ մի գեղքում տեղ չպիտի ունենա կոռպերատիվում:

Մի խոսքով լավ գործակատարը կոռպերատիվը դնում է այնպիսի հիմունքների վրա, վոր գնումները կատարվում են առանց ավելորդ հարց ու փորձերի, առանց սակարկության:

ՀՀ.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Պ.Ա. Պաբլիկան Բնույթ 17/11/1922

Ցեղ որինակելի՝ կոռպերատիվի աշխիքի յի լնկնում վոչ միայն առլուր ինքնի համկությամբ, զների եժանությամբ, մի հանգամանք, վոր մեծ չափով արդյունք և ազգայնացրած արդյունաբերության ու ազգայնացրած առեսարի կողմից կոռպերացիային վերապահված արագությունների, այլ և ներբին կարգերով, քաղաքավարի ու վայելուչ վերաբերմունքով, վորն ստեղծվում և պարտաճանաչ գործակատարի ջանքերով:

Ահա այսպիսի կոռպերատիվը միայն կարողանում է գրավել սպառողների բազմություն, վոր բեռնավորված կոռպերատիվի ապրանքներով՝ անցնում և մամնավոր խանութի մոտով՝ մամնավոր խանութը մատնելով մոռացության ու արհամարհանքի:

7

Այս փոքրիկ զրույցը ավարտելուց առաջ մնում է մեզ ասել վերջին խոսքը. այդ այն ե, վոր կոռպերատիվի գործակատարը անպայմանորեն ավելի լավ պիտի վարձատրվի, քան մասնավոր խանութի գործակատարը. սակայն վարձատրության չափը պիտի համապատասխնի կոռպերատիվի շրջանառությանը և ունենալիք յեկամունքին, մի հանգամանք, վոր կախված և մեծապես այդ նույն գործակատարի շնորհքից

և գործը վարելու ընդունակությունից: Այլա-
պես՝ գործակատարը վոչ միայն հնարավորու-
թյուն չի ունենա լավ վարձրատրվելու, այլ և
անհամաշափ ծախքեր կատարելով, վատանգի
կենթարկի կոռակերատիվի գոյությունն անգամ:

Լավ գործակատարը ստեղծում է որինա-
կելի կոռակերատիվ և դրանով նա վոչ միայն
ձեռք ե բերում հարգանք, այլ և լավ վարձա-
տրվելու հնարավորություն:

ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ ԳՈՐԾԻ ՐԱՊԵՅԻՆ *)

Հաճախորդը կոռակերատիվում ապրանք
գնելիս՝ գործ ե ունենում մի բանի գործակա-
տարների հետ:

Կոռակերատիվ մտնելիս, յեթե գնողները
շատ են, գնորդը կանգնում է հերթի. հերթի
վրա հսկում ե մեկ գործակատար:

Շարքի հետ առաջ շարժվելով, նա մոտե-
նում է չեկեր բաց թողնող սեղանին. սեղանի
առաջ նստած ե մի այլ գործակատար:

Այդտեղից հաճախորդը մոտենում է դրա-
մարկղին, այդուեղ ել նստած ե մի այլ գործա-
կատար:

*) Այս վերնագրի տակ դրված ցուցմունքները
վերաբերում են խոշոր կոռակերատիվներին:

Յեվ վերջապես՝ դրամը վճարելուց հետո՝
հաճախորդը մոտենում է վերջին գործակատա-
րին. սա ապրանք բաց թողնող գործակա-
կատարն է:

Սրանք բոլորն ել գործակատարներ են,
վորոնք ունեն հատուկ պարտականություններ:
Ի՞նչպես են կատարում նրանք իրենց պար-
տականությունները:

Հերթի վրա հսկող գործակատարը հետևում
է, վոր հաճախորդներից վոչ մեկը հերթը չը
խախտի, ինչ հասակի ու ինչ դիրքի յել վոր
նա լինի: Գործակատարը առահճնապես հետևում
է, վոր հերթը չը խախտին մանավանդ ծանոթ-
ներն ու բարեկամները: Հերթի խախտում թույլ
տվող պաշտօնյան կոռակերատիվի գործակատար
լինել չի կարող:

Չեկեր բաց թողնող գործակատարը հեր-
թով ընդունում է հաճախորդի ձեռքից անդա-
մագրեռուկը, նախ ստուգում ե՝ արդյոք անդա-
մագրեռույկ ներկայացնողը անդամն ինքն ե, կամ
նրա ընտանիքի անդամներից մեկն ու մեկը,
թե կողմնակի ուստիվող, այս ստուգումը նրա հա-
մար ե, վոր անդամագրեռույկը կողմնակի մարդ-
կանց տալը արգելվում է: Ապա, անդամագրեռույկի

մեջ նշանակում ե հաճախորդի ցանկացած տպ-
րանքները, դնում նրանց գիմաց գինն ու գումարը
և ընդհանուր գումարը նշանակելով՝ յերկու որի-
նակ չեկ անդամագրքույկի հետ հանձնում ե հա-
ճախորդին, իսկ մեկ չեկը թողնում ե իր մոտ՝
տեսրին կպած։

Դրամ ընդունող գործակատարը նախ չեկերն
ընդունում ե համարներով, այդպես վարվելով
նա պահպանած ե լինում հերթական կարգը։
Ապա ստուգում ե չեկի վրա նշանակած գումարը,
աբդյանք սխալ չի հաշված գումարը։ Ստուգելուց
հետո ստունում ե զրամը, և չեկի վրա դնելով
«ստացված ե» կնիքը, ստորագրում ե ու յերկու
չեկերից մեկը պահում ե իր մոտ՝ իսկ մյուսը
վերադարձնում ե հաճախորդին։

Աւենամեծ ու միաժամանակ պատախա-
նատու աշխատանքը կատարում ե ապրանք-
րաց թողնող գործակատարը։

Սա նորից չեկերն ընդունում ե հաճա-
խորդներից՝ համարների կարգով, Յեթե պահնջը
գործվացք ե, գործակատարը մի առ մի կարգում
ե չերի վրա նշանակած տեսակները, վայր ե
բերում համապատասխան թոփիը, կարում ե նշա-

նակված չափով, գրում ե կտրածի վրա կարմիր
կամ կապույտ մատիտով չափը, — այսպես վար-
վում ե նաև չերի վրա նշանակված բոլոր տե-
սակների հետ և ապա՝ բոլոր կտրած կտորները
սոսուգելով չեկի վրայի գրվածի հետ, կանոնա-
փոր կերպով փաթաթում ե թղթի մեջ և հանձ-
նում հաճախորդին։

Իսկ յեթե չեկի վրա նշանակված են կշռի
ապրանքներ, որինակ՝ ալյուր, շաքար, յուղ,
ձեթ և այլն, այդ գեպքում գործակատարը պա-
հանջում ե տոպրակներ և ա մաններ, նախ վեր-
ցնում ե զրանց տարաները՝ լցնում ե ու խնամ-
քով կշռում, այնպես վոր թեթև չը կշռվի։ Այն
գեպքում, յերբ հաճախորդը տոպրակներ չի ներ-
կայացնում՝ գործակատարը վերցնում ե կոռ-
պերատիվի ունեցած թղթից մաքուր տոպրակ-
ներ և նրանց մեջ ե լցնում ապրանքը ու կշռում։

Կան ապրանքներ ել, վորոնք գնվում ու
վաճառվում են հակով, տասնյակով, դյուժինով,
տուփով—այդպիսի ապրանքները՝ նորից գոր-
ծակատարը համարում ե, ստուգում, թղթի
մեջ փաթաթում ու ապա հանձնում հաճախորդ-
ներին։

Այս կարգով ընդունում ու ճանապարհ ե
ձգում հաճախորդին կոռպերատիվի հաց վաճա-

ոռղ, միս վաճառող և այլ տեսակի ապրանքներ
բաց թողնող գործակատարը:

Բոլոր գեղքերում գործակատարը բաց և
թողնում ապրանքը՝ պահելով իր մոտ հաճա-
խորդի ներկայացրած չեկերը:

Ինչպես տեսանք՝ չեկը գրվեց յերեք որի-
նակ. դրանցից մեկը մնաց չեկեք բաց թողնող
գործակատարի մոտ, յեկլորդը մնաց գրամ ըն-
դունող գործակատարի մոտ, իսկ յերրդը մնաց
ապրանք բաց թողնող գործակատարի մոտ:

Սրա նպատակն այն է, վոր առեվտրի
դադարելուց հետո, նախ քան խանութը փա-
կելը, յերեք կետերում հավաքված չեքերը
հաշվեն առանձին առանձին, համեմատեն իրար
հետ յերեք կետերում ստացած զումարները
և յերբ այդ զումարները բռնեն իրար, այդ
ժամանակ միայն փակեն որվա հաշիվը և ապ-
րանքները կապահպակելով՝ խանութը կողպեն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0203266

ԳԻՆՆ Ե 8 ԿՈՊԵԿ

300
1712-40